# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 783-Ա « 03 » հուլիսի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՎԱՆ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2025 թվականի հուլիսի 11-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացնել 2022-2024 թվականների ֆինանսական աուդիտ:

2. «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲԸ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս.Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետ Ս.Հարությունյանին և առաջատար մասնագետի ժ/պ Ս.Սարգսյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**